



SGP The GEF
Small Grants
Programme



Փոքր քայլեր,
մեծ ձեռքբերումներ

SMALL STEPS,
GREAT ACHIEVEMENTS



2009-2015

ԳԷՀ ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ
ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

GEF SMALL GRANTS
PROGRAMME ACTIVITIES



ՋԿ
NGO



Ծրագրի ժամկետ
Project duration



Դրամաշնորհի գումար
Grant amount



Համաֆինանսավորում
Co-financing

ԵՐԵՎԱՆ 2016
YEREVAN 2016

ՆԱԽԱԲԱՆ FOREWORD

Բրեդլի Բուսետո

ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ

Հայաստանին ցուցաբերվող վարձագման աջակցության միջոցով, որն ընդգրկում է ավելի քան քսան տարվա ժամանակահատված, այսօրյա ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) եզակի դիրք է զբաղեցնում որպես կառավարության, քաղաքացիական հասարակության և սովորական քաղաքացիների չեզոք և առանցքային գործընկեր: ՄԱԶԾ-ն աշխատում է քաղաքականության մշակման մակարդակում խորհրդատվություն տրամադրելով իրավական և քաղաքականության մշակման վերաբերյալ, սակայն միևնույն ժամանակ իրականացնում է համայնքային ծրագրեր ձևավորելու նորարարական, կայուն լուծումներ: ՄԱԶԾ-ի գործունեության ծածկույթը ողջ երկրում հսկայական է գյուղական և քաղաքային վայրեր, երիտասարդների, նորարարների և սոցիալական ձեռներեցների հարաձուլ ցանց:

Որպես Հայաստանում Փոքր դրամաշնորհների ծրագրի (ՓԴԾ) հանձնառու աջակից՝ 2009 թ. սկզբին մեկնարկից ի վեր, ՄԱԶԾ-ին հաջողվել է ի մի բերել կառավարության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և դոնոր համայնքի ջանքերը կրկնօրինակելի և ընդլայնելի համայնքային նորարարությունների միջոցով: Արդյունքները խոսում են. մենք տեսել ենք, որ Հայաստանում փոքրածավալ, համայնքների կողմից իրականացվող ծրագրերը կարող են ունենալ մեծ ապդեցություն: Կիրառելով նորարարական գործելակերպեր, որոնք անդրադառնում են բնապահպանական հիմնահարցերին, ՓԴԾ-ի ֆինանսավորած այս նախաձեռնություններն օգնել են ստեղծել մի շարք սոցիալական օգուտներ և ապրուստի այլընտրանքային հնարավորություններ գյուղական համայնքների համար: 2009-2015 թթ. Վգալի թվով ծրագրեր կրկնօրինակվել և ընդլայնվել են՝ գրավելով կառավարությունների և այլ դոնորների հետաքրքրությունը, և ի վերջո ապդեցով ազգային քաղաքականությունների և օրենքների մշակման վրա: Այսօր, ի թիվս այլ դոնորների, Հայաստանում ՓԴԾ-ն համարվում է դրամաշնորհների տրամադրման ամենահաջողված ապակենտրոնացված մեխանիզմներից մեկը՝ ՀՎ-ների և համայնքային կազմակերպությունների աշխատանքներին օժանդակելու համար, հատկապես այն կազմակերպությունների, որոնք աշխատում են կենսաբազմազանության պահպանության, կլիմայի փոփոխության մեղմման, միջազգային ջրերի պահպանության, հողերի դեգրադացիայի կանխման և վնասակար քիմիական նյութերի և թափոնների տարածվածության կրճատման ոլորտներում: Քաղաքացիական հասարակության և համայնքային կազմակերպությունների հետ իր սերտ աշխատանքի շնորհիվ, ՓԴԾ-ն դարձել է Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի և ՄԱԶԾ-ի «հանրային դեմքը», հատկապես տեղական, համայնքային մակարդակում: Հուսով ենք, որ այս հրատարակությունը կհետաքրքրի բնապահպանական և կայուն զարգացման հարցերով զբաղվող համայնքին, փորձագետներին, որոշում կայացնողներին, ինչպես նաև կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը և դոնոր կազմակերպությունները ներկայացնող գործընկերներին կցուցադրի ՓԴԾ-ի մոտեցման արժեքը և շարունակական նշանակությունը:



Bradley Busetto

UN Resident Coordinator/ UNDP Resident Representative

Through its development support to Armenia, spanning a period of over twenty years, today's United Nations Development Programme (UNDP) holds a unique position as a neutral and key partner to government, civil society and regular citizens. It works at the policy level, advising on legal and policy frameworks, while at the same time implementing grassroots projects to model innovative, sustainable solutions. UNDP also has an enormous reach across the country - in rural and urban areas and amongst a growing network of youth, innovators and social entrepreneurs. As a committed supporter of the Small Grants Programme (SGP) in Armenia since its launch in early 2009, UNDP has managed to bring together the government, civil society organizations and donor community through community innovations that are replicable and scalable.

The results speak for themselves: we've seen that in Armenia small, community-led projects can have big impacts. By applying innovative practices that address environmental issues, these SGP-funded initiatives have helped create a range of social benefits and alternative livelihood opportunities for rural communities. Between 2009 and 2015, a significant number of projects were replicated and scaled up, attracting the interest of governments and other donors, and ultimately influencing the development of national policies and laws.

Today, SGP in Armenia is considered as one of the most successful decentralized grant-delivery mechanisms amongst other donors for supporting the grassroots activities of NGOs and community-based organizations, particularly those working in biodiversity, climate change, abatement, protection of international waters, prevention of land degradation and reducing the prevalence of harmful chemicals and waste. Through its deep engagement with civil society and community-based organizations, SGP has become the public face of the Global Environment Facility and UNDP, particularly at the local, community level.

We hope that this publication will interest the environmental and sustainable development community, and will demonstrate to practitioners, decision-makers, and partners in government, civil society, and donor agencies the value of SGP's approach and its continuing significance.

Դելֆին Գանապին

ՓԴԾ-ի Գլխավոր Տնօրեն

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող Փոքր դրամաշնորհների ծրագիրը (ՓԴԾ) մեկնարկել է 1992 թ. որոշակի մանդատով աջակցել համայնքներին, հատկապես աղքատ և խոցելի համայնքներին, ինչպես նաև տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպություններին շրջակա միջավայրի պահպանությանը և կայուն զարգացմանն ուղղված իրենց ջանքերում: Համայնքների հետ աշխատելիս ՓԴԾ-ն հետևում է «մտածել գլոբալ, գործել տեղում» սկզբունքին, սակայն նպատակ ունենալով ստեղծել գլոբալ դրական ապդեցություն: Կրկին ու կրկին, նվիրյալ անհատների, համայնքների և տեղական կազմակերպությունների տևական և համադրված գործողությունների շնորհիվ է, որ տեղի են ունենում անհրաժեշտ փոփոխությունները դեպի արտադրության և սպառման կայուն մոդելներ:

Սույն հրատարակությունը ներկայացնում է 2009 թվականից ի վեր ՓԴԾ-ի օժանդակությամբ Հայաստանում իրականացված ծրագրերի գործունեությունը և ապդեցությունը. ծրագրեր, որոնք ոչ միայն բերել են բնապահպանական օգուտներ, այլև անդրադարձել են շահագրգիռ կողմ հանդիսացող համայնքների տնտեսական և սոցիալական կարիքներին: Արժե հատկապես նշել Հայաստանում ՓԴԾ-ի աջակցությունը համայնքներին և գործընկեր քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ինչի շահառուներն են եղել արդեն իսկ 10000 տնային տնտեսություններ ողջ երկրում)՝ օգտագործելու հիմնախնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ գտնելու մտահոգիչ բնապահպանական և սոցիալ-տնտեսական հիմնահարցերի առավել արդյունավետ, հավասարություն ապահովող և կայուն լուծումներ: Մշակվել և 20-ից ավելի համայնքներում փորձարկվել են արեգակի էներգիայի օգտագործման նոր լուծումներ և էներգաարդյունավետության բարելավման միջոցառումներ: Համայնքների կողմից կառավարվող և «Խոսքովի անտառ»-ի համար որպես բուֆերային շրջաններ ծառայող պահպանվող տարածքների գործնական մոդելների ներդրումը ուժեղացրել է բնական էկոհամակարգերի պահպանությունը այս կարևոր պետական արգելոցում: Կենսաբանական լճակների օգտագործմամբ կենցաղային կեղտաջրերի մաքրման ծրագիրը Փարաքարում՝ հանգեցրել է այդ արդյունավետ տեխնոլոգիաների ընդլայնմանը և կրկնօրինակմանը այլ դոնորների կողմից: ՓԴԾ-ն օժանդակել է նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և տեղի բնակիչների նպատակային ներգրավմանը վարձագման պլանավորման և քաղաքականության ձևավորման աշխատանքներում ինչպես տեղական, ինչպես էլ կենտրոնական մակարդակում՝ ԶՀԿ-կառավարություն տարբեր գործակցային շրջանակների և երկխոսությունների միջոցով: Նշված գործողությունների արդյունքում ընդունվել են մի շարք որոշումներ էկոտուրիզմի, հողերի կայուն կառավարման, և պլաստիկ թափոնների կրճատման վերաբերյալ: Նույն կերպ, ՓԴԾ-ի և դրամաշնորհառու գործընկերների աշխատանքի արդյունքում ընդունվել է իրավական ակտ «Արփի լիճ» ազգային պարկի գոտում Դարևակու լիճի ընդգրկման մասին:

Նշված ձեռքբերումներն արդյունք են բազմաթիվ գործընկերների և շահագրգիռ կողմերի ունեցած ավանդի և անխոնջ աշխատանքի, ովքեր հավատարիմ են մնացել իրենց առաքելությանը, նույնիսկ մարտահրավերների հանդիպելիս: Ուստիև սույն հրատարակությունը պատրաստվում է ի նշանավորումն և ի ձանաչումն այս հապարավոր անհատների, ինչպես նաև բազմաթիվ տեղական կազմակերպությունների և ցանցերի աշխատանքի: Որոշ իմաստով, սա հրավեր է՝ որպես ջատագով միանալու ՓԴԾ-ի համայնքին՝ ի օժանդակություն կայուն զարգացմանը, հատկապես՝ համայնքային մակարդակում:



Delfin Ganapin

SGP Global Manager

The UNDP-implemented GEF Small Grants Programme (SGP) was launched in 1992 with a specific mandate: support communities, especially the poor and vulnerable, as well as local civil society organizations in their efforts at environmental protection and sustainable development. SGP follows the principle of “thinking globally, acting locally” in working with communities at the grassroots level yet with the aim to create positive global impact. Time and again, it is the sustained and combined action of committed individuals, communities, and local organizations that creates the needed transformation towards sustainable production and consumption patterns.

This publication presents the work and impact of SGP-supported projects in Armenia since 2009 which provided not just environmental benefits but also addressed the economic and social needs of its stakeholder communities.

Of particular note, is the support of SGP Armenia to communities and partner civil society organizations – that has now benefited 10,000 households throughout the country - to use creative problem-solving processes for more effective, equitable and sustainable solutions to environmental and socio-economic issues of concern. New solutions on solar energy use applications and energy efficiency improvement measures were developed and tested in more than 20 communities. The introduction of practical models of community-managed conservation territories buffering “Khosrov Forest” strengthened ecosystem protection in this important State Reserve. The demonstration of domestic wastewater treatment through the use of biological ponds in Parakar led to the scaling up and replication of these effective technologies by other donors.

SGP also supported the meaningful involvement of civil society organizations and local citizens in local as well as national development planning and policy formulation through different CSO-Government collaborative frameworks and dialogue processes. These actions led to a number of decisions on eco-tourism, sustainable land management and plastic waste reduction. Similarly, a legal act on the incorporation of Vipera Darevskii into the “Lake Arpi” National Park zone was supported and influenced by the work of SGP and its grantee-partners.

These accomplishments are the result of the contribution and tireless work of many partners and stakeholders that have remained true to their mission, even when confronted by challenges. Therefore, this publication is a celebration and a recognition of the work of these thousands of individuals and many local organizations and networks. In a sense, this serves as an invitation to join the SGP community as a fellow advocate in support of sustainable development especially at the grassroots level.

Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) Փոքր դրամաշնորհների ծրագիրը (ՓԴԾ), որը հիմնադրվել է 1992 թ-ին՝ Ռիոյի Երկրի գագաթնաժողովի տարում, մարմնավորում է կայուն զարգացման բուն էությունը՝ հետևելով «մտածել գլոբալ, գործել տեղում» սկզբունքին: Ֆինանսական և փորձագիտական օժանդակություն տրամադրելով այնպիսի ծրագրերի, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պահպանմանը և վերականգնմանը, միևնույն ժամանակ բարելավելով մարդկանց բարեկեցությունը և կենսամիջոցները, ՓԴԾ-ն ի ցույց է դնում, որ համայնքային գործողությունները կարող են պահպանել մարդկանց կարիքների և բնապահպանական հրամայականների փխրուն հավասարակշռությունը: Հայաստանում ԳԷՀ ՓԴԾ-ն պաշտոնապես մեկնարկել է 2008 թ. նոյեմբերին և դրամաշնորհներ է տրամադրել ապգային ՀԿ-ներին և համայնքային կազմակերպություններին՝ հետևյալ նպատակներին ուղղված աշխատանքների համար. ա) կենսաբանական ռեսուրսների պահպանում և կայուն օգտագործում, բ) պայքար հողերի դեգրադացիայի դեմ, գ) կլիմայի փոփոխության մեղմում, դ) միջազգային ջրերի պահպանություն, ե) վնասակար քիմիական նյութերի անվտանգ կառավարման խթանում: Բացի այս ուղղակի գործողություններից, ՓԴԾ-ը կայացել է որպես միջամտությունների հուսալի մոդել շրջակա միջավայրի կառավարման ոլորտում: Այլ միջազգային դոնոր կազմակերպություններ օգտագործել են ՓԴԾ-ն որպես իրականացման մեխանիզմ իրենց սեփական նախաձեռնությունների, օրինակ, Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող նախաձեռնության համար, որը նպատակ ուներ խթանելու կայուն զարգացումը և բարելավելու շրջակա միջավայրի կառավարումը բնապահպանական կառավարմանը քաղաքացիական հասարակության առավել արդյունավետ մասնակցության միջոցով:



60

Իրականացվել է
ավելի քան
60 ծրագիր
**Over 60 projects
implemented**



2

Հատկացվել է
ավելի քան
2 միլիոն
ԱՄՆ դոլար
դրամաշնորհային
գումար
**Over 2 million USD
provided for grant-
making**



2

Մոբիլիզացվել է
մոտ 2 միլիոն
ԱՄՆ դոլար
գումար
**About 2 million
USD mobilized
from other donors**



8

Կրկնօրինակվել
և ընդլայնվել են
ՎԷԱ
օգտագործմանը
առնչվող
8 ծրագրեր
**8 projects on
renewable energy
sources use
replicated and
scaled-up**



120

Տարեկան
կրճատվել է
առնվազն
120 տոննա CO₂
**At least 120 tons of
CO₂ emissions reduced
annually.**



64

Ապահովվել է
64 նշանակալի
տեսակների
պահպանությունը
**64 IUCN and National
Red Data Book
species protected**



7000

Վերականգնվել են
ավելի քան 7000 հա
գյուղատնտեսական
նշանակության
հողեր և արոտներ
**Over 7,000 hectares
of farmlands
and grasslands
rehabilitated**



5

Բարելավվել է
ավելի քան
5 հատուկ
պահպանվող
տարածքների
պահպանության
կարգավիճակը
**More than 5
Protected Areas
improved their
conservation status**



18

Տարեկան
կանխվում է
մոտ 18 տոննա
մակերևութային
աղտոտիչների
ներթափանցումը
**About 18 tonnes of
surface pollution
prevented**



1

Կիրառվել է
կեղտաջրերի
մաքրման
նորարարական
փոքրածավալ
տեխնոլոգիա
**Innovative small-
scale wastewater
treatment
technology used**



10000

Առնվազն
10000 տնային
տնտեսություններ
ուղղակիորեն
օգուտ են քաղել
ՓԴԾ-ի ծրագրերից
**At least 10,000
households directly
benefited from SGP
projects**



1000

Ավելի քան
1000 մարդ
ձեռք են բերել
մշտական և (կամ)
ժամանակավոր
աշխատատեղեր
**Over 1,000 people
received permanent
and/or temporary
jobs.**




4

Տարեկան
վերամշակվում է
մոտ 4 տոննա
պլաստիկ
թափոն
**About 4 tonnes
of plastic waste
recycled annually.**

Established in 1992, the year of the Rio Earth Summit, the Global Environment Facility's (GEF) Small Grants Programme (SGP) embodies the very essence of sustainable development by "thinking globally, acting locally". By providing financial and technical support to projects that conserve and restore the environment, while also enhancing people's well-being and livelihoods, the SGP demonstrates that community action can maintain the fine balance between human needs and environmental imperatives.

In Armenia, the GEF SGP officially started in November 2008 and provided grants to national NGOs and community-based organizations for activities aimed at: i) conservation and sustainable use of biological resources; ii) combating land degradation; iii) mitigation of climate change; iv) protection of international waters; and v) promoting sound management of harmful chemicals. Beyond direct activities, the SGP established itself as a reliable model of intervention in the field of environmental governance. The SGP served as a delivery mechanism for other initiatives, for example, an EU-funded initiative which aimed to promote sustainable development and improve environmental management through more effective civil society participation in environmental governance.

ՓՂԾ-ի ծրագրերը
SGP PROJECTS



ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՐԵՎՍԿԻԻ ԻԺԻ *VIPERA DAREVSKII* ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՈՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱԶԱՆԶԻ
ԳՅՈՒՂՈՒՄ՝ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԼՈՒԾՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

BIODIVERSITY CONSERVATION

IMPLEMENTATION OF MEASURES FOR CONSERVATION
OF *VIPERA DAREVSKII* BY PROPOSING HARMONIZED
SOLUTIONS TO BIODIVERSITY PROTECTION AND RURAL
INFRASTRUCTURE DEVELOPMENT IN GHAZANCHI
COMMUNITY (SHIRAK REGION)



«ԲՆԱԿԱՆ ԷԿՈԶԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԿ
“SUSTAINABLE DEVELOPMENT OF
NATURAL ECOSYSTEMS” NGO

9/2009 - 12/2010

\$36 420

\$43 650



Ծրագրի նկարագրություն

Դարևսկու իծը (*Vipera Darevskii*), որպես Բնության պահպանության միջազգային միության կարմիր ցուցակում և ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված «Կրիտիկական վիճակում գտնվող» տեսակ, հանդիպում է միայն Զավախքի լեռնաշղթայի Հայաստանի տարածքի հարավ-արևմտյան մասում:

Լեռնալանջերի հարթ քարակույտերը Դարևսկու իծի հիմնական բնադրավայրերն են, որոնք լեռնային անբարենպաստ պայմաններում ապահովում են իծի գոյատևման համար օպտիմալ միկրոկլիմա: Դարևսկու իծի համար առաջնահերթ վտանգ է ներկայացնում բնադրավայրերի խաթարումը, որը տեղի է ունենում անասունների չկանոնակարգված արածեցման, խոտհունձի և գյուղատնտեսական այլ նպատակներով հողերի յուրացման հետևանքով:

Ծրագիրը նպատակաուղղված էր իրականացնելու պահպանական միջոցառումներ՝ նվազագույնի հասցնելու մարդկանց կողմից հողօգտագործման և իծի բնադրավայրերի պահպանման հակամարտությունները: Դրանց խաթարումը անասունների և մարդկանց կողմից կանխելու նպատակով կատարվել է հիմնական բնադրավայրերի (քարակույտերի) փշալարով ցանկապատում և տեղադրվել են տեղեկատվական վահանակներ այցելուներին տեղեկացնելու վտանգված տեսակի առկայության մասին: Անասունների ջրարբիացման համար կառուցվել է արհեստական ջրամբար և համայնքի հետ համատեղ մշակվել ու ներդրվել է հերթափոխային արածեցման համակարգ: Բացի այդ, Ղազանչի համայնքին մշտական խմելու ջրով ապահովելու համար հորատվել է խորքային հոր:

Որպես ծրագրի վերջնարդյունք Զավախքի լեռնաշղթայի լանջերին գտնվող Դարևսկու իծի բնադրավայրերի տարածքն ընդգրկվել է «Արփի լիճ» ազգային պարկի պահպանվող գոտուս:



1

Ընդունվել է իրավական ակտ՝ Դարևսկու իծի բնադրավայրերի տարածքը պահպանելու վերաբերյալ


Legal act adopted safeguarding Vipera Darevskii habitat areas



500

500 համայնքի անդամներ ուսուցանվել են իծի պահպանման և որսագողության դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ

500 community members trained on conservation and anti-poaching measures



20%

Ջրարբիացման համար կառուցված արհեստական ջրամբարի շնորհիվ 20%-ով ավելացել է կաթի և մսի արտադրողականությունը

Milk and meat productivity increased by 20% through building of a new watering point



678

678 բնակիչներ ապահովվել են մշտական խմելու ջրով

678 residents were provided with access to permanent drinking water

Քաջիկ Թովմասյան՝ համայնքի ղեկավար

«Անասունների ջրարբիացման ջրամբարի կառուցումը շատ կարևոր էր համայնքի համար, քանի որ այն կնպաստի կաթի և մսի արտադրողականության աճին: Բացի այդ, ինքնահոս ջրաղբյուրը կապահովի համայնքը մշտական խմելու ջրով, որը նախկինում մղվում էր պոմպով՝ պահանջելով շատ ժամանակ և էլեկտրաէներգիա»:

Project description

The Darevsky's viper (*Vipera Darevskii*) is a critically endangered species of snake (International Union for Conservation of Nature red list and Red Book of Armenia) occurring only in Armenia's south-western part of the Javakheti Ridge. Flat stone plates (biotopes) are critical to the viper's habitat, creating an optimal microclimate for vipers living in otherwise harsh highland conditions. The species' main threat comes from habitat destruction caused by uncontrolled livestock grazing and land use for agriculture.

This project focused on minimizing human conflicts over land use and safeguarding the habitats of the viper. Barbwire fencing was introduced around the main biotope sites, in order to stop their destruction by livestock and humans, and information boards were constructed informing visitors that endangered species were present. Additionally, a new livestock watering point was constructed and rotation-based livestock grazing systems were developed and introduced in partnership with the local community. Finally, a deep water well was drilled to provide a safe and long-term drinking water supply for the community of Ghazanchi.

As an outcome of the project, the endangered viper habitats located in the western Javakheti Ridge were incorporated into the protected reserve zone of "Arpi Lich" National Park.

Kajik Tovmasyan, Head of Community

"The construction of a watering point is very important for the community as it ensures increased milk and meat productivity in the community. Also, the flowing well ensures the quicker provision of water to the community, which was previously pumped and therefore more time and energy-consuming".

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԹՈՂՆԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ԿԹՏ)
ԽՆԱՄԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԴԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԹԵԺ ԿԵՏԵՐՈՒՄ

STRENGTHENING THE ROLE OF LOCAL IMPORTANT BIRD AREAS
(IBA) CARETAKER GROUPS IN BIODIVERSITY HOTSPOTS OF
ARMENIA

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
BIODIVERSITY CONSERVATION



«ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ»
“ARMENIAN SOCIETY FOR THE
PROTECTION OF BIRDS” NGO

9/2009 - 1/2011

\$26 379

\$112 781



Ծրագրի նկարագրություն

Կարևորագույն թռչնաբանական տարածքներ (ԿԹՏ) են հանդիսանում համաշխարհային մակարդակով մեկ կամ ավելի վտանգված թռչնատեսակների բնադրավայրերը: ԿԹՏ «խնամակալները» կազմավորվել են մշտադիտարկելու այդ տարածքները հավաքելով տվյալներ թռչնատեսակի առկա պոպուլյացիային սպառնացող վտանգների վերաբերյալ, գնահատելու և վաղօրոք նախազգուշացնելու հնարավոր խնդիրների մասին: ԿԹՏ-ներում տեղի թռչնատեսակների և բնադրավայրերի առավել արդյունավետ պահպանությանն ուղղված խնամակալների խմբերի ներուժը ամրապնդելու նպատակով, Դսեղ համայնքում ներդրվել է բնական պաշարների ոչ սպառողական օգտագործման վրա հիմնված այլընտրանքային եկամուտ ստանալու գործելակերպ՝ կրթության, ուսուցանման ու էկոլոգիայի կրթության կարգազման, ինչպես նաև տեղական համայնքի դերի հպորացման միջոցով:

Դսեղ ԿԹՏ-ում ստեղծվել է Տեղեկատվական և ուսուցանման կենտրոն այցելուների համար: Վերջինս պոսաշրջիկներին կտրամադրի տեղեկատվություն տեղի վայրի բնության և պահպանության խնդիրների վերաբերյալ և կօժանդակի կազմակերպելու թռչնադիտարկման և էկոտուրիստական արշավներ՝ միաժամանակ ծառայելով որպես կրթական կենտրոն տեղի երիտասարդների համար: Սա մեծ ազդեցություն կունենա թռչնադիտարկման, և համայնքում էկոլոգիայի կրթության կարգազման համար:

Բարձրացնելով տեղական բնակչության իրազեկությունը համաշխարհային մակարդակով ԿԹՏ-ի կարևոր դերի վերաբերյալ և ամրապնդելով տեղի ԿԹՏ «խնամակալների» կարողությունները, ծրագիրը զգալի ներդրում է կատարել Հայաստանի վտանգված թռչնատեսակների պահպանության համար, ինպիսիք են՝ Մոխրագույն կռունկը և Դալմացյան հավալուսնը:



1

կառուցվել է
1 այցելուների
կենտրոն
1 visitor centre
constructed



700

Տարածաշրջանի ավելի քան
700 աշակերտներ մասնակցել են
«Մոխրագույն կռունկ»
փառատոնին
700 pupils from the region
participated in “Common Crane”
Festival

Էդուարդ Շեկոյան՝ Դսեղ համայնքի բնակիչ

«Այժմ այստեղ անցկացվում են տարբեր բնապահպանական և կրթական միջոցառումներ: Բացի այդ, համայնքի անդամները ակտիվորեն ներգրավվել են պոսաշրջության կենտրոնի շինարարության աշխատանքներում»:

Project description

Important Bird Areas (IBAs) are sites identified as being habituated by one or more globally threatened species of bird. ‘Caretaker’ groups in the IBAs monitor the sites by collecting data on current bird populations, threats, and provide estimates and early warnings of potential problems.

To enhance the capacities of the local caretaker groups towards more effective conservation of species and sites, a number of alternative income-generating practices were introduced in the community of Dsegh, focused on the non-consumptive use of natural resources. These practices were achieved through education, training and ecotourism development.

An Information & Education Hub (visitor centre) was constructed in Dsegh IBA. The visitor centre was designed to help provide information to tourists on local wildlife and conservation problems and will assist in organizing bird watching and ecotourism trips, as well as serve as an educational centre for the local youth. Ultimately this will boost bird watching and local ecotourism development in the community.

By increasing the local population's awareness on the importance of the area for Globally Threatened Species, and by enhancing the capacities of local IBA Caretakers, the project has made a substantive contribution towards the conservation of endangered bird species (e.g. Common Crane and Dalmatian Pelican) at the IBAs in Armenia, whilst also promoting local empowerment.

Eduard Shekoyan, Dsegh community resident


“Several different environmental and education events are now held here. Also, the community members were actively involved in building the tourist centre”.



ՍԵՎԱՆԻ ԻՇԽԱՆ (*SALMO ISCHCHAN KESSLER*) ԶԿՆԱՏԵՍԱԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ՝ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԶՐԶԱԿԱՔ ԱԿԱԶԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ԳԵՂՆՈԿԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԶԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԻՄՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

CREATING PRECONDITIONS FOR PROTECTION AND REPRODUCTION OF SEVAN TROUT (*SALMO ISCHCHAN KESSLER*) THROUGH ENVIRONMENTAL AWARENESS BUILDING IN A NUMBER OF COMMUNITIES OF LAKE SEVAN WATERSHED AND ESTABLISHMENT OF A FISHERY IN GEGHHOVIT COMMUNITY

ԿԵՆՍԱՐԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
BIODIVERSITY CONSERVATION



«ԳԼՈԲԱԼ ԷԿՈ» ՀԿ
"GLOBAL ECO" NGO

1 1/2011 - 1 1/2012

\$34 935

\$34 964



Ծրագրի նկարագրություն

Հայաստանի Հանրապետության և Նախկին ԽՍՀՄ կարմիր գրքերում գրանցված «Սևանի իշխան» (*Salmo ischchan kessler*) եզակի ձկնատեսակը հանդիսանում է Սևանա լճի էնդեմիկ: Ձվադրատեղերի չորացման պատճառով, Սևանի իշխանի չորս ենթատեսակներից երկուսը՝ ձմեռային բախտակը (*Salmo ischchan ischchan*) և բոջակը (*Salmo ischchan danilewskii*) ամբողջությամբ վերացել են, և ըստ Բնության պահպանության միջազգային միության (IUCN) չափանիշների այժմ համարվում են անհետացած: Սևանի իշխանի մնացած երկու ենթատեսակները (Ամառային իշխան և Գեղարքունի) պահպանելու նպատակով ծրագրի շրջանակներում իրականացվել են Սևանա լճի էկոհամակարգի և կենսաբազմազանության վերականգնմանն ուղղված աշխատանքներ: Մասնավորապես, Գեղարքունիքի մարզի Գեղիովիտ համայնքում հիմնվել է ոչ մեծ ձկնաբուծարան, որտեղ վերարտադրության նպատակով աճեցվելու են Սևանի իշխանի երկու ենթատեսակները: Ձկնաբուծական համալիրը ներառում է բուծարանը, մանրաձկան աճեցման առանձնացված ջրավազանները, ինչպես նաև ոչ էնդեմիկ տեսակների սիրողական ձկնորսության լճակը: Որպես անհետացող էնդեմիկ ձկնատեսակների վերարտադրության հատուկ միջոցառում, տարեկան հինգից տասը հազար մանրաձուկ է բաց թողնվում Սևանա լիճ և լիճ թափվող գետերը՝ լճի ձկան պաշարների վերականգնման նպատակով:



2

Իշխանի 2 ենթատեսակների մայրական կազմն ավելացել է

Maternal composition of 2 indigenous trout subspecies increased



5000

Կատարվել է տարեկան շուրջ 5000 մանրաձկան բացթողում

Around 5,000 juvenile fish reintroduced into the wild annually



30

Լրացուցիչ 30 լ/վ ոռոգման ջրի տրամադրում 30 տնտեսություններին

30 litres per second additional irrigation water made available for 30 households



1

Կառուցվել է 1 սիրողական ձկնորսության լճակ

1 amateur fishing pond constructed



92

92 համայնքի բնակիչներ ուսուցանվել են կենսաբազմազանության պահպանման և կենսաբազմազանության համար անվտանգ տնտեսական գործունեության վերաբերյալ

92 community members trained on biodiversity conservation and biodiversity-friendly livelihood practices

Վարդան Պողոսյան՝ Գեղիովիտ համայնքի ղեկավար

«Այս նախաձեռնությունը, անշուշտ, կօգնի լուծել համայնքի սոցիալական խնդիրները և իշխանը կվերադարձնի Սևանա լիճ»:

Project description

The unique “Sevan trout” (*Salmo ischchan kessler*), registered in the Red Book of Animals of Armenia and the former Soviet Union, is endemic to Lake Sevan. As a consequence of the drying out of spawning grounds, two out of the four Sevan trout subspecies – the Winter Bakhtak (*Salmo ischchan ischchan*) and the Bojak (*Salmo ischchan danilewskii*) – have disappeared completely and are now considered extinct according to the criteria of International Union for Conservation of Nature (IUCN). The other two subspecies spawning in rivers – the Summer Bakhtak (*Salmo ischchan aestivalis*) and the Gegharkuni (*Salmo ischchan gegarkuni*) – have managed to survive because of artificial reproduction, though are classified as critically endangered according to the IUCN criteria.

To ensure the conservation of the two remaining subspecies, this project carried out restoration activities to rehabilitate the ecosystem and biodiversity of Lake Sevan. A small-scale fish hatchery was established in the community of Geghovit, Gegharkunik region, where these two subspecies of the Sevan trout are farmed. The fishery complex includes an incubation facility for relevant fish species, external fry (infant fish) raising pools, as well as an amateur fishing pond with non-endemic species. As a specific measure aimed at rehabilitating endangered endemic species and restoring the fish stock of the lake, the release of five to ten thousand juvenile fish in the basin's rivers and Lake Sevan is conducted annually.

Vardan Poghosyan, Head of Geghovit community

“This initiative will certainly help to solve social problems in the community and return trout to Lake Sevan”.

ԱՌՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԿԵՐԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՀԻՆ ՀՈՒՆԻ
ՋՐԱՃԱՀԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

RESTORATION OF THE WETLAND ECOSYSTEM IN THE OLD
RIVERBED OF THE AKHURYAN RIVER UPPER STREAM

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
BIODIVERSITY CONSERVATION

«ԽԱԶԵՐ» ՀԿ
“KHAZER” NGO

07/2012 - 12/2012

\$9 050

\$13 820



Ծրագրի նկարագրություն

Ախուրյան գետը հոսում է Արփի լճից, որը գտնվում է Շիրակի մարզի հյուսիս-արևմուտքում, Աշոցքի սարահարթում, ծովի մակարդակից մոտ 2010 մ բարձրության վրա: 1950 թ-ին, ջրաձահձային հանդակի չորացման հետևանքով, գետի հունը փոխվել էր և վերին հոսանքում վերածվել ջրանցքի: Չնայած նրան, որ գետի հին հունը կորցրել էր ջրի նախնական հոսքը, այնուամենայնիվ, շնորհիվ այս գործողությունների էկոհամակարգին բնորոշ կենսաբազմազանությունը ինչ-որ չափով պահպանվում էր: Դժբախտաբար, վերջին ժամանակներում այն սկսել էր դարձյալ ցամաքել: Զրանցքն ունի շուրջ 1.5 մ խորություն, սակայն, տարվա ընթացքում ջրի մակարդակի տատանումը 40-50 սմ է՝ կախված տեղումներից և գրունտային ջրերի մակարդակից, ինչը բացասաբար է ազդում գետային էկոհամակարգի կայունության վրա՝ ռիսկի տակ դնելով Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակները, ինչպիսիք են՝ Դեղին կոկոռը (*Nuphar lutea* (L.) Smith), Կովկասյան ջրասամույրը (*Lutra lutra*), Մոխրագույն կռունկը (*Grus grus*), և այլն: Ծրագրի նպատակն էր հիդրոտեխնիկական միջոցառումների, այդ թվում՝ պատվարի կառուցման և Ախուրյան գետի հին հունի վերին հատվածի ջրաձահձային տարածքը վերականգնելու միջոցով կենսաբազմազանությունը պահպանումը, որին կօժանդակի տեղի համայնքների մասնակցությամբ մշտադիտարկումը: Ծրագրի իրականացումը կնպաստի Հայաստանում կենսաբազմազանության վտանգված կարևոր տեսակների պահպանությանը:



100

Վերականգնվել են մոտ 100 հա ջրաձահձային տարածքներ

Around 100 ha of wetlands rehabilitated



10

Վերականգնվել է տեղի վտանգված տեսակների 10 հա կարևոր բնադրավայր

10 ha of habitats for local endangered species restored

Ամալիա Համբարձումյան՝ «Խապեր» էկոլոգամշակութային ՀԿ-ի նախագահ

«Ծրագրի ավարտից հետո ջրի մակարդակը բարձրացել էր մինչև մեկ մետր, որը վերականգնման ակնհայտ նշան է»:

Project description

The Akhuryan River flows from Lake Arpi, located in the North-West of Shirak region on the Ashotsk plateau at an altitude of about 2,010 metres above sea level. In 1950, the upper reaches of the river wetland began to drain. As a result, the diminishing section of the river had to be transformed into a manmade canal. This action helped preserve the River's local biodiversity, despite the former riverbed losing its original water flow. Unfortunately, in recent times the River has begun to drain once again.

The canal has a depth of about 1.5 metres; however, during the year water level fluctuations of around 40-50 cm occur, depending on precipitation and groundwater level. This has a negative impact on the sustainability of the River ecosystem. Species that are at risk include the Yellow Water Lily (*Nuphar lutea* (L.) Smith), the Caucasian Otter (*Lutra lutra*), the Gray Crane (*Grus grus*), which are registered in the Red Book of Armenia.

Through several hydro-technical initiatives, including the construction of a dam, this project sought to restore the wetlands around Akhuryan River and reverse its drainage. Ultimately this will lead to the conservation of local biodiversity, which is further supported by a community-based monitoring initiative. The project's implementation has promoted the conservation of important endangered biodiversity species in Armenia.


Amalya Hambardzumyan, Chairwoman of “Khazer” Ecological-Cultural NGO

"After completion of the project, the water level rose by up to a metre - a clear sign of recovery"

ՈՒՐՑԱԶՈՐԻ ԷԿՈ-ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ. ՏԵՂԻ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱԿՈՒՄ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

THE URTSADZOR ECO-TRAINING CENTRE: IMPROVING
CAPACITY OF LOCAL VILLAGERS FOR SUSTAINABLE USE OF
BIODIVERSITY RESOURCES

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
BIODIVERSITY CONSERVATION



ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
FOUNDATION FOR THE PRESERVATION
OF WILDLIFE AND CULTURAL ASSETS

09/2012 - 09/2014

\$49 990

\$94 599



Ծրագրի նկարագրություն

Ուրցաձոր գյուղը, ինչպես նաև համայնքին պատկանող հողատարածքը, գտնվում են «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հարակից մասում: Չնայած նրան, որ այս տարածքները կենսաբազմազանության առումով իրենցից բարձր արժեք են ներկայացնում և կապմում են կարևորագույն բուֆերային գոտի արգելոցի համար, այնուամենայնիվ, տարածքի բուսական և կենդանական աշխարհը տուժում է մարդկային գործունեության կործանարար ազդեցությունից: Արգելոցի հարակից տարածքների թերի պահպանությունն իր ուղղակի բացասական ներգործությունն էր ունենում արգելոցի պահպանվող գոտու կենսաբազմազանության վրա: Էկո-կրթական կենտրոնի ստեղծման նպատակն էր անդրադառնալ այս խնդրին՝ տեղի համայնքի հմտությունները բարելավելու միջոցով նպաստել տարածքի կենսաաշխարհային կայուն օգտագործմանը: Ավելին, քանի որ գյուղի բնակչության համար հույժ կարևոր է սոցիալական անապահովության խնդիրը և վերջինիս հետ փոխկապակցված արտագաղթը, էկո-կրթական կենտրոնը տեղի բնակչությանը կծանոթացնի բնական ռեսուրսների ոչ սպառողական օգտագործման միջոցով եկամուտ ստանալուն (էկո-տուրիզմի, բնության ուղղորդողների, թռչնադիտության, կայուն գյուղատնտեսության գործելակերպերին և այլ թեմաներով դասընթացներ): Ուրցաձորի էկո-կրթական կենտրոնը կծառայի որպես ՎԲՍԱՋՐԻԿՆԵՐԻ հանգրվան, գիտական հետազոտողների բազա և էկո-կրթական միջոցառումների անցկացման վայր: Երկարաժամկետ առումով, ծրագրի առաջնային նպատակն է ներգրավել ամբողջ համայնքը գյուղի և «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հարակից տարածքների կայուն կառավարման և պահպանման գործում:



1

Կառուցվել է
էկո-կրթական
կենտրոն
Eco-Training Centre
built



3000

4 հա հողատարածքը
անտառապատվել է
3000 ծառերով
3000 trees reforested
across 4 hectares of land



3

Բացվել և գործում են
3 հյուրատներ
3 B&B houses
established



120

120 դպրոցականներ
մասնակցել են
բացօթյա
բնապահպանական
դասընթացներին
120 school students
participated in outdoor
environmental
education classes



10

10 երիտասարդներ
մասնակցել են
բնության ուղղորդողի
մասնագիտական
դասընթացներին
10 young residents
trained on nature
guiding

Լաուրիկ Հովհաննիսյան՝ հյուրընկալող և ծրագրի շահառու, Ուրցաձոր համայնք, Արարատի մարզ

«Ետ նայելով չեմ կարող հավատալ, որ պատրաստվում էի հրաժարվել ծրագրի տված հնարավորությունից, որն այժմ ապահովում է իմ ընտանիքի բարեկեցությունը»:

Project description


The community of Urtsadzor and its surrounding lands are located in the direct vicinity of “Khosrov Forest” State Reserve. These communal territories traditionally have high levels of biodiversity and form an important buffer zone for the reserve; however, in recent times the area’s flora and fauna have suffered from destructive human activity. The poor protection of the reserve’s adjacent territories has had a direct negative impact on the biodiversity in the protected area.

The establishment of an Eco-Training Centre aims to address this problem by supporting the community to use the area’s biodiversity resources in a sustainable fashion. Moreover, as the local population suffers from poverty and outmigration due to a lack of job opportunities, the Eco-Training Centre raises local capacities to generate income from alternative sources. Using environmentally friendly approaches to nature conservation, the centre holds trainings on eco-tourism, nature guiding, bird watching, sustainable practices in agriculture, and more. The Centre also serves as a lodge for tourists, a scientific hub for researchers, and a venue for environmental education.

In the long-term, the project will involve the entire community in the management and protection of a large pristine area of communal land adjacent to the village and to “Khosrov Forest” State Reserve.

Laurik Hovhannisyan, B&B host and project beneficiary, Urtsadzor village, Ararat region

“Looking back, I can’t believe I was about to say “no” to something which now provides for the welfare of my family”.



ՄԵՂՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ «ՍԵՎԱՆԻ ԳԻՂՈՒ ՆՈՍՐԱՆՏԱՌԱՅԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱԿԱՅՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

DEVELOPMENT OF BEEKEEPING IN THE COMMUNITIES ADJACENT TO "JUNIPER OPEN WOODLANDS OF SEVAN" STATE SANCTUARY

ԿԵՆՍԱՐԱԶՄԱՋԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
BIODIVERSITY CONSERVATION



«ԿԱՐԴԵՆԻՍԻ ՄԵՂՎԱԲՈՒՅԾ ՄԵՂՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
"BEE-KEEPING" BEE-MASTER ASSOCIATION
OF VARDENIS NGO

09/2012 - 12/2013

\$35 281

\$29 577



Ծրագրի նկարագրություն

Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Ճամբարակի շրջանների բնակչության դժվար սոցիալական կացությունը նրանց անտարբեր է դարձրել բնության նկատմամբ: Սևանի գիհու Նոսրանտառային պետական արգելավայրին հարակից Զիլ, Փամբակ, Դարանակ և Ծափաթաղ համայնքները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ՝ պահպանվող տարածքն օգտագործելով որպես արոտավայր:

Արգելավայրի տարածքի բուսածածկի բավականության ու կենսագործունեության պահպանմանը նպաստելու, տեղի ապրուստի բարելավման ու անվերահսկելի արածեցումը սահմանափակելու նպատակով՝ տարածաշրջանում նախաձեռնվել է մեղվաբուծության վարձացումը՝ մեղվաբուծական տնտեսությունների ստեղծմամբ: Մասնավորապես, յուրաքանչյուր համայնքում 20-ական մեղվաբնտանիք է տրամադրվել ընտրված շահառուներին: Վարդենիսի «Մեղվաբուծ մեղվապահների ասոցիացիա» ՀԿ-ն, ունենալով մեղվաբուծական ընտանիքներ հիմնելու փորձ, Նոր մեղվաբուծներին տրամադրել է անհրաժեշտ սարքավորում և կանոնավոր խորհրդատվություն՝ ապահովելով նաև արտադրված մեղրի մարքեթինգը: Ակնկալվում է, որ պետական արգելավայրի հարևանությամբ գտնվող մեղվաբնտանիքների փեթակները կծառայեն որպես փոշոտման աղբյուր մոտակա մշակովի հողերի համար՝ բարձրացնելով մշակաբույսերի բերքատվությունը, կապահովեն կայուն եկամուտ ծրագրի համայնքների համար, և կնպաստեն բնական պաշարների պահպանմանն ու կայուն օգտագործմանը:



1

Ապահովվել է Հայկական մեղվատեսակի պահպանումը

Conservation efforts of the Armenian bee species boosted



4000

Արգելավայրի 4000 հա տարածքի բուսածածկը բարելավվել է փոշոտման միջոցով

Natural pollination of 4,000 ha of State Sanctuary improved



80

4 շահառու համայնքներին տրամադրվել է 80 մեղվաբնտանիք

80 bee-houses distributed in 4 communities



300

Ապահովվել է լրացուցիչ 300 ԱՄՆ դոլարի չափով տարեկան եկամուտ յուրաքանչյուր շահառուի համար

300 USD additional annual income per household generated



7

7 մեղվապահներ ավելացրել են իրենց փեթակների թիվը և ապահովել արտադրած մեղրի մթերումը

7 beekeepers multiplied their beehives and initiated honey marketing

Վահան Սարգսյան՝ Դարանակ համայնքի բնակիչ

«Մենք այժմ վայելում ենք մեղրի բերած օգուտները: Այն իմ ընտանիքի համար դարձել է լրացուցիչ եկամուտի աղբյուր»:

Project description

For the populations of Vardenis and Chambarak districts of Gegharkunik region, difficult social conditions have made the residents indifferent towards nature. The communities of Jil, Pambak, Daranak and Tsapatagh, adjacent to "Juniper Open Woodlands of Sevan" State Sanctuary, who are mainly engaged in cattle breeding, use the local protected areas as pastures.

In order to support the biological functioning of the sanctuary, improve local livelihoods and limit uncontrolled grazing, the project piloted the creation of bee farms in the region. Under the project, 20 bee houses were provided to selected households in each community. The new beekeepers received equipment and regular consultations from the "Bee-keeping" Bee-master Association of Vardenis, which also supported the marketing of honey.

It was also envisaged that the beehives located nearby the state sanctuary serve as a source of pollinators for local cultivated lands. These pollinators increase crop yields, generate sustainable income to the project communities and contribute to the conservation and sustainable use of natural resources.

Vahan Sargsyan, Daranak community resident

"We're now enjoying the benefits that honey brings. It has given my family extra income to spend on other things".

ՈՐՈՏԱՆ ԳԵՏԻ ԱԿԱԶԱՆՈՒՄ ԶԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՈԴԵԼ

DEVELOPMENT OF A FISHERY AS A PILOT MODEL FOR
CONSERVATION AND REPRODUCTION OF BIODIVERSITY IN
VOROTAN RIVER BASIN

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
BIODIVERSITY CONSERVATION



«ՎԱԴԱՏԻՆ» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԿ
"VAGHATIN" ENVIRONMENTAL NGO

10/2013 – 09/2014

\$24 848

\$8 210



Ծրագրի նկարագրություն

Կարմրախայտ (*Salmo Trutta m. fario*) ձկնատեսակի պոպուլյացիան կտրուկ նվազել է հիդրոտեխնիկական կառույցների՝ մասնավորապես, փոքր հիդրոէլեկտրակայանների թվի ավելացման պատճառով, գետերի ակունքներում ջրի որակի և էկոլոգիական թողքի փոփոխության, ինչպես նաև անվերահսկելի ձկնագողության հետևանքով: Բացասական սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված, իշխանի այս տեսակի վրա ճնշումը էապես ավելացել է մի շարք գետերում՝ Ներառյալ Որոտանը, որտեղ ջրի որակի ցածր ցուցանիշները և ձկնագողությունը դարձել են լուրջ խոչընդոտ ձկնատեսակի վերարտադրության համար: Իշխանի այս վտանգված տեսակի վերարտադրության և պահպանման նպատակով հիմնվել է ձկնաբուծական համալիր Սյունիքի մարզի Վաղատին համայնքում: Համալիր միջոցառումներից բացի, շրջակա ջրային միջավայր տարեկան բաց է թողվում երեքից հինգ հազար մանրածուկ: Ծրագրի շրջանակներում տարածաշրջան են հրավիրվել գիտական կոչում ունեցող բուհական, գիտահետազոտական հաստատությունների կամ կառավարման մարմինների պրակտիկ աշխատանքի փորձ ունեցող համապատասխան մասնագետներ, և անցկացվել են ուսուցողական բնույթի սեմինարներ Վաղատին համայնքում կենսառեսուրսների պահպանման և կայուն օգտագործման, ինչպես նաև ագրո-էկոտուրիզմի պարզացման թեմաներով: Այն հնարավորություն ստեղծեց համայնքի անդամների համար ստեղծել այլընտրանքային եկամուտ ստանալու հնարավորություններ և խթանել իշխանի այս վտանգված տեսակի վերարտադրությունը և պահպանումը:



1

Կարմրախայտ (*Salmo Trutta m. fario*) ձկնատեսակի մայրական կապը ավելացել է
Maternal staff of Brook Trout increased



5000

Կատարվել է տարեկան 5000 մանրածուկ բացթողում շրջակա ջրային միջավայր
Around 5,000 juvenile fish reintroduced into the wild annually



50

50 համայնքի բնակիչների համար անցկացվել են դասընթացներ կենսաբազմազանության համար անվտանգ գործելակերպերի վերաբերյալ
50 community residents trained on biodiversity-friendly livelihood practices

Տիգրան Մանուչարյան՝ Վաղատին համայնքի բնակիչ

«Ես նույնպես որոշեցի հիմնել փոքր ձկնաբուծարան, որը կարող է նպաստել մեր բարեկեցությանը, նաև ավելացնել գյուղով անցնող գետակի ձուկը»:

Project description

The population of the Brook Trout (*Salmo trutta m. fario*) in rivers throughout Armenia has declined drastically as a result of the enlargement of small hydro power plants that effect water quality and flow patterns. This has been exacerbated by uncontrolled poaching, itself a result of negative social-economic conditions. These factors combine to create serious obstacles for further reproduction of the trout, greatly increasing the pressure on this species in the rivers of the region.

In order to encourage the reproduction and conservation of the endangered trout, this project established a fish-breeding complex in the community of Vaghatin in Syunik region. The project oversaw the release of three to five thousand juvenile fish into the surrounding natural environment, including in Vorotan River – an activity which will continue to be conducted annually. In addition, a number of specialists with practical experience with scientific, research or governing agencies held trainings in Vaghatin on conservation, sustainable use of biological resources, and the promotion of agro-ecotourism. This created opportunities for community members to earn income from alternative sources, and incentivised the reproduction and conservation of endangered trout species.

Tigran Manucharyan, Vaghatin community resident

“I decided to start a small fishery. This gives me business and increases the fish stocks in the local river that passes through our village”.

ԿԱՅՈՑ ԶՈՐԻ ՀՈՐՍ, ԱՂՆՋԱԶՈՐ ԵՎ ԹԱՐԱԹՈՒՄԲ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԲԱՐԵԼԱԿՈՒՄԸ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ
ԿԱՌԱԿԱՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

COMMUNITY LIVELIHOOD IMPROVEMENT THOUGH
INTRODUCTION OF SUSTAINABLE MANAGEMENT OF
NATURAL RESOURCES IN HORS, AGHNJADZOR AND
TARATUMB COMMUNITIES OF VAYOTS DZOR REGION

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
BIODIVERSITY CONSERVATION

«ԲԵԶՈԱՐ» ԲՆԱԴԱՀՊԱՆԱԿԱՆ ՀՎ
"BEZOAR" ENVIRONMENTAL NGO

10/2013 – 01/2015

\$41 120

\$47 150



Ծրագրի նկարագրություն

Հայաստանի Վայոց Ձորի Աղնջաձոր, Հորս և Թարաթումբ համայնքների միջև ընկած լեռնա-անտառային և սուբալպիական լանդշաֆտի վտանգված կենսաբազմազանությունը գրեթե ուսումնասիրված չէր: 1700 հա տարածքն իր մեջ ներառում է Վայոց Ձորի ողջ բնական ռեսուրսների բազմազանությունը՝ լեռներ, անտառներ, լիճ, խոնավ տարածքներ և արոտավայրեր իրենց հարուստ կենսաբազմազանությամբ: Ավելին, այն հարակից է «Խոսորվի անտառ» պետական արգելոցի արևելյան սահմանին, որը միջանցք է հանդիսանում մի շարք վտանգված վայրի կենդանիների համար, օրինակ հովապի (*Panthera pardus*), բեզուարյան այծի (*Capra aegagrus*), մուֆլոնի (*Ovis orientalis*) և այլն: Ցավոք, այսպիսի հարուստ կենսաբազմազանությունը վտանգված է գյուղատնտեսության արագ վարճացման, ինչպես նաև բնական ռեսուրսների ոչ շրջահայաց օգտագործման՝ որսագողության, անտառահատման, արոտավայրերի գերշահագործման հետևանքով, որոնք բերում են վայրի բնության և բնական էկոհամակարգերի խաթարման: Տեղի բնության պահպանումը խթանելու և Վայոց Ձորի տեղական համայնքների ու վայրի բնության միջև հակամարտությունը նվազեցնելու նպատակով՝ ներդրվել է կենսաբազմազանության պահպանման տեսանկյունից ներդաշնակ և կայուն եկամուտ ստանալու գործելակերպ՝ ի նպաստ համայնքների բարեկեցության բարձրացմանը: Կենսառեսուրսների վրա հիմնված ապրուստի միջոցների ապահովման կայուն գործելակերպի ներդրման նպատակով ծրագրի շրջանակներում իրականացվել են վտանգված էկոհամակարգերի գույքագրում, գնահատում և մոնիթորինգ: Էկոլոգոսաշրջիկների համար ստեղծվել են համայնքային ենթակառուցվածքներ, տեղի բնակիչներն իրազեկվել են, թե ինչպես է պետք պահպանել կենսաբազմազանությունը, ինչպես նաև ամրապնդվել են տեղական կարողությունները ի նպաստ պահպանվող տարածքների կառավարմանը: Ծրագրի համայնքներում էկոլոգոսաշրջության ներդրումը և վարճացումը կստեղծի եկամուտի լրացուցիչ աղբյուրներ, և կբարձրացնի հարուստ կենսաբազմազանության կարևորության և արժեքի տեղական ըմբռնումն ու իրազեկվածությունը:



1

Հիմնվել է համայնքային էկո-կենտրոն
Community
eco-centre established



3

Ստեղծվել է 3 ժամանակավոր ճամբարատեղի իրեց հետիոտնային արահետներով
3 sites for temporary
camps and hiking trails
established



13

Կառուցվել և տեղադրվել է 13 դիտակետ և տեղեկատվական վահանակ
13 observation points
and information boards
constructed and installed

Վահե Վարդանյան՝ Հորս համայնքի բնակիչ

«Ես հիմա տեսնում եմ, որ կան նոր հնարավորություններ մնալ գյուղում և ունենալ եկամուտ հոգալու իմ ընտանիքի ապրուստը՝ միևնույն ժամանակ պահպանելով մեր բնաշխարհը»:

Project description

The unique mountain forests, subalpine landscapes, pristine lakes, wetlands and grassland found in the communities of Hors, Aghnjadzor and Taratumb, in Vayots Dzor region are home to a great range of biodiversity. This area adjoins the eastern section of “Khosrov Forest” State Reserve and serves as a buffer zone and ecological corridor for many rare and endangered wild animals, including Leopards (*Panthera pardus*), Bezoar Goats (*Capra aegagrus*), Mouflons (*Ovis orientalis*) and more. Unfortunately, as a result of rapidly developing farming and uncontrolled use of natural resources (such as poaching, logging, and overgrazing) the indigenous ecosystem and wildlife are under severe threat.

In order to promote nature conservation in the area and reduce the conflict between wildlife and local communities, this project introduced sustainable and eco-friendly income generation practices and helped incorporate them into local community livelihoods. In order to encourage the sustainable use of natural resources, specific activities were performed, such as cataloguing and monitoring threatened ecosystems, establishing a community-based tourist infrastructure, awareness raising on biodiversity conservation, and developing local capacities in protected area management. The introduction and development of eco-tourism has created an additional sources of income and increased local understanding on the importance and value of rich biodiversity.


Vahe Vardanyan, Hors community resident

“Now I see that there are ways to work in my village to support my family, and at the same time, help our nature”.

ԿԵՐԱԿԱՆԳՆԿՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ ՆՈՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ՝ ԼՈՌԻՈՒ ՄԱՐԶԻ ՏՆԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՉՈՐԱՆՈՑՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

DEMONSTRATING NEW TECHNIQUES AND TOOLS TO USE
